

## ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

Մեռած զործիչներին հրապարակական լուրգանք արտայալունքու ամենատողավական ձևը մեր մէջ՝ Յ. Կազարիանի մահուան հարիւրամեակի առիթով որոշումներ մայրաքաղաքներում.—Գամառ-Գաթիպալի մահարձանի բացումը և հայի հասարակական անտարրելութեան նոր ապացուցներ, —Ղետնդ Ալիշանի հոգեհանգստի առիթով յարտնած նոր սկզբոնք. —Հայ-կաթողիկ Ալիշանի օրինակը ի՞նչ ապացուցեց. —Մի թուրք վաճառականի հասարակական լայն ձգումները. —Գիտութեան անաշառութիւնը. —Հնագիտական Ընկը ճիւղի նշանակութիւնը կովկասցիներիս համար. —Բօրորդիկինը զգական պրօյետորիալիք մասին. —Գրական մշակներին օգնող ընկերութիւններ և գրողների դրութիւնը բարտքելու նոր կազմակերպութիւն. —Գրական Շխովէլինների սինդիկատը և կօնտր-սենդիկատը. —Ճաղանդի բնատանա հայերիս մէջ. —Հայի զանդապաշարժութիւնը. —Քառասուն տարուայ գրական անսպառ նիւթ. —Յ. Կաճկակեանի մահը. —Սաստկադրած պահպանութեան դրութիւնը. —Լուսաւորութեան մինիստրի հրամանը.

Մինչի օրս հայ ժողովուրդը մի անմեղ սովորութիւն ունէր. Նա հրապարակական ազօթք կամ հոգեհանգիստ էր կատարում իր երախտագիտութեանը արժանացած ամեն մի մեռած գործիչի համար, երբէք հարց չը տալով իրան՝ արդեօք հանգուցեալը լուսաւորչական էր, թէ օտարադաւան. Մեր պարզամիտ հոգեորականներն էլ, մինչև մեր մէջ ասաւուածաբանների երեան գալը, հայոց նկեղեցու սուն և կանոններին հակառակ ուժնչ չէին գտնում. հոգեհանգիստ կատարելու մէջ թէ կաթողիկ Ագամեանի, թէ բողոքական Գլազուոնի, թէ մահմեզական Նասր-Էղդին Շահի և թէ շատ ուրիշների համար: Մերք դիտմամբ չենք խօսում սուլթանի արհշատութեան համար ամեն տարի Թիւրքիայի հայոց նկեղեցիներում կատարուող մաղթանքների մասին, որովհետեւ մեզ կարող են առարկել, թէ սահպուած շատ բան են անում մարդիկ, ուստի այդ իրողութիւնը փաստական նշանակութիւն չունի. կարևոր է ժողովրդի ազատ, ինքնարուղիս ցանկութիւնը՝ աղօթել իր եկեղեցում

Նրանց համար, որոնց յիշատակը թանգ է նրա սրտին: Եւ յանկարծ... բայց դրա մասին յետոյ, այժմ՝ մենք զուսաւորչական» գործիչների յիշատակով զբաղուենք:

Սյովէս ահա, հաւատարիմ հայկական բարի սովորութեան, մայրագաղաքների հայերը երկու ամիս առաջ հոգեհանգիստ կատարեցին Լազարեան ձեմարանի հիմնադիրի համար, նրա մահուան հարիւրամեակի ասիթովի Հայ ազգը իրան երախտապարտէ զգում դէպի Յովիսնէս Լազարեանի յիշատակը, որովհետեւ այդ նշանաւոր հայը գեռ այն խաւար ժամանակներում, երբ այժմեան սուսաց Հայաստանը հեծում էր մահմեդական լծի տակ և մի հատ կանոնաւոր գալրոց չը կար մեր երկրում, մտածեց իր կարսղութեան մի մասը՝ 200 հուզար, յատկացնել իր թըշուաս աղբակիցների մատուոր-բարոյական վերածնութեան՝ բանալալ թուսաստանի սրտում մի մեծ կրթական հստոսատութիւն: Մեռնելով, նա իր կամքի իրագործումը յանձնեց իր կըրտասիր եղբօրը՝ Յովակիմին:

Սյա վերջինը՝ ինչպէս յայտնի է, իր անձնական կարողութիւնից էլ համարեա նոյնքան աւելացնելով մեծ եղբօր կտակածի վրայ, 1815 թուականին փառաւորապէս զլուխ բերաւ իրանց տոհմային անունը կրող ձեմարանի բայցումք: Այնուհետեւ Լազարեանների համար մի տեսակ ընտանեկան տրադիցիա էր դառել կուակներով ու նուէրներով աւելի և աւելի տպահովել իրանց տոհմային պարծանք զարձած ուսումնաբանի դոյութիւնը: Լազարեանները զանազան ժամանակներում մի միլիօնից աւելի են նուէրել ձեմարաննին, չը հաշուած այդ ընդարձակ և հոյակապ շինութեան վրայ արած ծախքերը: Ուրախուլի է տեսնել, որ հայ ժողովուրդը այս անգամ ցոյց տուեց որ գործով էլ զիտէ գնահատել այդ մեծ տոհմի արածը: Մոսկուայի հայերը, յաւերժացնելու համար Յովիսնէս Լազարեանի յիշատակը, որոշեցին՝ այդ գաղութի հայ աղջկանց համար ծխական գորոց բանալ: Իսկ Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհուրդը վճռել է Լազարեան ձեմարանում 20 թօշակաւոր աշակերտներ պահել: Միայն թէ—եթէ ճիշտ են լրագրական լուրերը—ինչու այդ թօշակաւորները տնպատճառ պէտք է հոգեորականների որդիներ լինեն: Մենք գերադասութիւն կը տայինք զիւղացիների զաւակներին, որովհետեւ մեր հոգեորականները աւելի աշքաբաց են և ճարպի, ուստի հազար ու մի ճանապարհ զիսւն՝ աջողեցնելու համար իրանց որդկերանց կրթութիւնը: Այլ է խաւար, անօգնական զիւղացին: Յամենայն գէպս ժողովրդին մոռանալ և միայն նրա չնչին մասի՝ հոգեորականնութեան մասին

մտածել արդարացի չէ: Դրա գէմ կը բողոքէր ինքը Գամառ-  
Քաթիպան անգամ, չը նայած որ քահանայի որդի էր:

Դամաս-Քաթիպան հայ ժողովրդի կողմից վաղուց արժանի  
էր շօշափելի երախտազիտութեան: Մահարձանը այդ զզացմունքի  
արտայայտիչը պէտք է լինէր: Բայց Նոր-Նախիջևանի ու Խաչ  
վանքում յաւիտենական քնով հանգստացած բանաստեղծը ար-  
ժանացաւ: Իր մահարձանի բացման օրը շատ սակաւա-  
թիւ յարգողների չնորհաւորութիւններին: «Մայր Արաքսի»-ի  
հեղինակը այնպիսի մեծ ժողովրդականութիւն է վայե-  
լում մեր մէջ, որ մեզ թւում էր թէ նրա մահարձանի բաց-  
ման հանդէսը պիտի ողեորէր հայերի աւելի ստուար խաւերը:  
Տարաբախտաբար այդպէս չէր. եթէ ընթերցողը ուշադրու-  
թեամբ կարգացել է պ. Գ. Զալիսուշևնի հրատարակած չնորհաւ-  
որութիւնների ցուցակը, նա պէտք է համաձայնի մեզ հետ,  
որ մի քանի ուսանողներ, հոգեորականներ և զրողներ (չը հաշ-  
ուելով քանի աստեղծի մօտ ազգականներին ու բարեկամներին) հե-  
ռու հն «Ժողովուրդ» լինելուց ուրեմն հայերի մեծամատնութիւ-  
նը «Ժամանակ» չի գտել, իրեի, կտրուել արշինից ու համրիչից  
և գէթ հեռազրական չնորհաւորութիւնով համազգային բնաւո-  
րութիւն տալ այդ համեստ հանդիսին: Ցիշած հանգամանքը աւելի  
ևս իրաւունք է տալիս կարծելու, որ ինքը հայ հասարակութիւնը  
չէր էլ մտածիլ մահարձան կանգնեցնելու մասին, եթէ բանա-  
ստեղծի բարեկամ պ. Գ. Զալիսուշևնի անհատական եռանդն ու  
ջանքերը չը լինէին: Դեռ աւելին կ'ասենք: Հայ հասարակութիւնը  
իրեի պահանջ էլ չէր զգալ ունենալ Ռ. Պատկանեանի երկասի-  
րութիւնների լիակատար հրատարակութիւնը, եթէ բանաստեղծի  
մի այլ բարեկամ, տիկին Վ. Քանանեանը, չը հոգար այդ  
մասին...

Մի երրորդ հոգեհանգիստ էլ պէտք է կատարուէր հայ  
ժողովրդի մեծ զաւակներից մէկի՝ Ղեւմնդ Ալիշանի համար,  
բայց թիֆլիսում նստած կծմրածնի նորագոյն վարդապետնե-  
րից մէկը յանկարծ ներչնչուեց մեր եկեղեցու նախանձախընդ-  
րութեամբ և իր վեօն զրաւ:

Ինչպէս այս տեսութեան սկզբում ասացինք, մինչեւ օրս  
անխափան կատարուել են մեր եկեղեցիներում հոգեհանգիստ-  
ներ ամեն զաւանութեան գործիների համար, ուրեմն արժէ  
որ պատութեան մէջ յիշուի այն մեծ անունը, որից նոր դա-  
րագուիս է սկսում... հոգեհանգիստների հարցում: Հայաստա-  
նեաց եկեղեցւոյ մէջ այդ նորութիւն մացնողը Գարեգին վար-  
դապետ Յովսէփեանն է, որ քաջութիւն ունեցու մի նոր  
սկզբունք» յայտարարել: Այդ սկզբունքը հետեւելն է: «Հայ-կա-

թոլիկները լուսաւորչական եկեղեցին համարել են հերձուտ-  
ծող. Ալիշանը կաթոլիկ է, ուրեմն նա էլ համամիտ է այդ  
կարծիքին, Հետեաբար, Ալիշանի գրական-գիտական գործու-  
նէութիւնը յարդելով հանդերձ, չը պէտք է թոյլ տալ հայոց  
եկեղեցում հոգեհանգիստ կատարել այդ մնձ հայի՝ ամբողջ աղ-  
գից սիրուած Նահապետի յիշատակին»:

Պէտք է նկատել, որ այդպիսի «սկզբանք» պաշտպանող-  
ները մի քիչ առաջ, գեռ Սլիշանի կենդանութեան ժամանակ,  
երբ տօնուում էր Միիթարեանների գրական-գիտական գործունէ-  
ութեան երկուհարիւրամեակը, գէմ էին, որ հայոց եկեղեցու  
«հարտղատ զաւակները», չնորհաւորեն «ուրացող» Միիթա-  
րի հիմնած միաբանութեան յիշած գործունէութեան յօրելեա-  
նը, և սաստիկ արտնջում էին, որ այդ առիթով Կաթո-  
ղիկոսը յատուկ ներկայացուցիչ է ուղարկել Վենեաիկ. Այժմ  
այդ նոյն պարօնները և պատուի ոչ արժանի հայրերը յայտ-  
ուում են, որ հակառակ չեն Միիթարեան միաբանութեան ա-  
մենանշանաւոր նախկին ամրամի, Սլիշանի, գրական-գիտական  
գործունէութեան համար հրապարակական չնորհակալութիւն  
յայտնել, միայն թէ հոգեհանգիստ կատարել մեր եկեղեցինե-  
րում անկարելի է. թոյլ կաթոլիկ եկեղեցում կատարուի և ի-  
րանք ուրախութեամբ կը գնան... Մի գէպքում չի կարելի չնոր-  
հաւորել գրական-գիտական գործունէութիւնը, իսկ մի այլ  
գէպքում հակառակ չեն... Բայց միթէ հակասութիւննե-  
րից զրանք ամաչում են. դա մի շատ սովորական բան է զը-  
րանց համար: Սակայն մենք կարեոր ենք համարում կանգ առ-  
նել այդ «նոր սկզբունքի» վրայ և ոչ հակասութեան, որով-  
հետեւ կը երական ոտնձգութիւն ենք անմուռմ գրած նեօնի մէջ:  
Մեր եկեղեցու տէրը ժողովուրդն է, իսկ հոգեորականները  
սպասաւորներ են, որոնք պարտաւոր են չը շեղուել մեր եկե-  
ղեցու ոգուց և կանոններից:

Եթէ «նոր սկզբունք» յայտարարուղները վստահանում են  
մի նոր կանոն մտցնել մեր եկեղեցու մէջ, որպէս սահմանափակ-  
ւում է ուղավրդի ազատ կամքը, աղօթելու ինքնաբուղի ցան-  
կութիւնը, այդ գէպքում ամեն մի հայ իրաւունք ունի պահանջել,  
որ այդ պարօնները և աստուածաբանները յոյց տային մեղ մի  
բացորոշ կանոն, որ արգելում է օտարադաւանի համար հոգե-  
հանգիստ կատարել մեր եկեղեցում: Մեզ հարկաւոր է յոյց  
տալ եկեղեցական ժողովներով ընդունած մի կանոն և ոչ այս  
կամ այն բարձրաստիճան անձի քմահանցոքը, որ օրը տասը  
ամսգամ կարող է փոխուել, նայած արամազրութեան կամ թելա-  
գրութիւններին: Իսկ ոտի տակ հաստատ օրինական հող չու-

նենալ և վեր կենալ բռնաբարել ժողովրդի իրաւանքը — դա խայտառակ ծաղր է ժողովրդի զգացմունքների վրայ, եթէ օտարդպաւանի համար հոգեհանգիստ կատարելը մեր եկեղեցին արգելում է, հազար ինչու մինչև «նոր սկզբունք» գիւտը ոչ ոք չը զիտէր մի այդպիսի կանոն, ինչու ուժմ էլ ամեն աեղ, բայց թիվիկից, Շուշոց և էջմիածնից, ուր բազմած են պճնազգեստ մեր «աստուածաբանները», միւս «պարզամիտ» հոգեորականները, ժողովրդի հետ միացած, հոգեհանգիստներ են կատարում Ալիշանի համար: Երեխ աշդ հոգեորականներն էլ «անխարական» են... մի յանցանք, որ մեր «աստուածաբանները» գուցէ չը ներէին և Քրիստոսին, արդէն չափից անց «անխարական» համարելով Նրան: Ի՞նչ կողմից ուզում էր վերցրէք այդ Շնոր սկզբունքը», բայց ոչ քրիստոնէական, ոչ ողդային, ոչ արդարութեան տեսակէտից չի կարելի համալրել նրան: Այդ «սկզբունքը», եթէ չասենք մնուած ձեականութեան և փարիսեցութեան արդինք, յամենայն դէպս պէտք է համարել չը մարսած մտքերի և չը պարզուած զգացմունքների մի ողորմելի խառնաշփոթութիւն, աւելի ոչինչ:

Մեր եկեղեցու վարկը գցող այդ մարդիկ երեխ կուզենային որ «Ալիշանը ապաշխարի իր մեղքերը» և «կրկին դառնայ լուսաւորչական եկեղեցու գիրկը», որպէս զի արժանանայ... դրանց հոգեհանգիստին: Սակայն շանկալի էր արգեաք տեսնել մեր դարում մի կաթոլիկ ընտանիքում ծնուած Ալիշանին կրօնափոխ եղած, երբ «հաստուցանելու համար զՀայրենեայն՝ Հայրենեաց» \*), հարկ չը կայ անպատճառ ընդունել էջմիածնի կաթոլիկոսի գերբիշաւանութիւնը: Խոկ այլ ես որ էական յատկանշով մեր «ազգային» եկեղեցուց տարբերում է հայ-կաթոլիկ եկեղեցին: Երկու տեղ էլ արարողութիւնները, պատարազը, շարականները հայոց գրաբարով են լինում: Խոկ Քրիդոր Լուսաւորչին Միթթարեանները աւելի քիչ չեն պաշտում քան էջմիածնի վարդապետները. կարգացէք, օրինակ, Ալիշանի ամենավերջին գրուածքը «Բազմավէպի» № 11-ում և խոստվանէք որ Լուսաւորչի աւելի ոգեօրուած ջատագով հազիւ գտնէք մեր ամբողջ միաբանութեան մէշ...

Եթէ հայկական թշուաս իրականութիւնը մի քանի դար առաջ (ինչպէս այժմ էլ թիւքիայում), Ալիշանի գուցէ պապերին ստիպել է քաղաքական որոշ նպատակով մի քայլ անել և էջմիածնի կաթողիկոսի փոխարէն Հոռոմի պապին ընդունել, միթէ այդ արդէն բաւական է արդարացնելու համար այն ստոր ձեիք մեր ամբողջ միաբանութեան մէշ...

\*.) Ալիշանի խօսքերը „Ալիշանութիւն“ առաջաբանում:

զրէժինդրութիւնը, սր նպատակ է գրել «նոր սկզբունքը»։ Յամենայն դէպս, «պապական» անհամբերողութեան դէմ բողոքողներին չի սազում գործ գնել «էջմիածնական» անհամբերողութիւններից առաջացած վէրքերը, այդպիսով աւելի են զրգում, խորթացնում մեր օտարադաւան ազգակիցներին։ Մինչդեռ արեկակի նման պարզ է, որ կրօնը չը կարողացաւ փոխել հայ ծոսւած Ալիշանին, սապանել նրա հայրենասիրաթիւնը։ Նա մեր հարազարդ է, որովհետեւ մեր զարում ազգայնական հարցը արդէն գուրս է եկել կրօնական նեղ փաթաթիւններից։

Մինչդեռ իրան Աւետարանի աշակերտ համարող մեր աստուածաբանները ջանքեր են գործ գնում պարզամիտ ժողովրդի մէջ մողեռանդութիւն քարոզել մի մահմեղական թուրք վաճառական ընդհակառակին է գործում։ Նա աշխատում է իր հստատակիցների մտքերեց փարատել ֆանատիկոսութիւնը։ Մեր խօսքը բագուեցի հարուստ Հաջի-Զէնալ-Արդին-Թաղինվի բացած դպրոցի մասին է։ Այդ նշանաւոր թիւրք միլիոնատէրը չուզեց նմանել ոչ միայն իր արիւնակից թիւրք հարուստներին, այլ և իրեն թէ «քաղաքակարթուած» հայ խոշոր բուրժուաններին, որոնց մէջ կան շատերը նոյն իսկ բարձրագոյն կրթութեամբ։ Թաղինվի, թէն անկիրթ, բայց իր հայեակներով աւելի է մօտ ամերիկացի միլիոնատէրերին, քան հայ կրթուած հարուստները։ Հաջին աշխատում է բարեգործութիւններ անել իր կենդանութեան ժամանակ և ոչ մեռնելուց յետոյ։ Նա շինեց թարուն, գնեց «Կառուն» լրագիրը և ամբողջապէս յանձնեց թիւրք ինտելիցիային, գումար տուեց Բագու քաղաքի ինքնավարութեան—արագայննելու համար մաքուր ջուր մատակարարելու հարցը և, վերջապէս, իր հաշուով կառուցեց Բագում մի հոյակապ շինութիւն՝ մահմեղական ազջկանց կրթութեան համար, միաժամանակ խոշոր գումարով սպահանովել այդ հիմնարկութեան կանոնաւոր գործունէութիւնը։

Այսպէս ահա մեզրեսէններում մօլլանների աւանդած «գիտութիւնը» չէր գոհայնում լուսամիտ Հաջուն։ Պարզ է որ նա լաւ հասկանում է որ նոր կեանքը, թիւրք ժողովրդի գոյութեան նոր պայմանները պահանջում են նոր աշխարհայեցողութիւն՝ հիմնուած գիտութեան և ոչ միայն կրօնի վրայ։ Պէտք է գիտութեան ճառագայթները թափանցեն կանանցութեան փակուած թրքուհիների մաքի և հոգու մէջ, որպէս զի նրանք ընդունակ դառնան հասկանալ որ իրանք ճակատագրի ուրոշամբ չեն ստեղծուած իրրեւ տղամարդու սարուկ կամ նրա վաւաշոտութեան առարկայ, այլ մարդ են մարդկային ամենավեհ

իրաւունքներով։ Եւ բաւական է, որ թրքունին զարգանայ այնաքան, որ ըմբռնի այս ծշմարտութիւնը. նրա ընտանեկան մթնութրութ կը փոխուի։ Ապա ընտանեկան վերսնորոգութիւնը կը կերպարանափոխի և նրա հասարակական կեանքը, կ'ազատի թիւքքի միաքը թէօկրատիական կապանքներից։

Այդպէս յեղափոխող է զիտութիւնը, որ ձգառում է բացարձակ ծշմարտութեան, առանց նայելու թէ ում է այդ հաճելի, ում ոչ։ Իսկ զեռ շատ շատերին նրա ազատ զարդացումը հաճելի չէ, առանց գիտութեամն դրած խոշնուտների աւելի ազատ են իրանց զգում՝ որոշ տիպի «հետալուսոզներ»... Նայն իսկ զէպի պատմական անցեալը այդպիսի «զիտնականները» միրում են տենտենցիօզ վերաբերմունք։ Պատմական քննազատութեան գաղափարը դրանց անյայտ է։ Դրանք չեն ուզում ընդունել որ պատմութիւնը, իբրև գիտութիւն, իր ասածները պէտք է հիմնի զանազան աղբիւրների, յիշատակարանների և անհերքելի փաստերի վրայ. դրանք չեն ընդունում, որ պատմական աղբիւրներն ու յիշատակարաններն անզամ նախ և առաջ պէտք է անցնեն գիտութեան քննութեան ամենախիստ բովից, որ արժանան վկայ, ապացոյց լինելու այս կամ այն ենթադրութեան։ Բնականաբար, զանազան հեղինակներից բերած ցիտազները գեռ ոչինչ չեն ապացուցում, եթէ այդ հեղինակների ստուգութիւնը կատարուած չէ։ Այդպէս չքննազատուած դրութեան մէջ է թէ մեր հայերիս և թէ վրացիների պատմական աղբիւրների միծագոյն մասը։ Հետեաբար, ոչ միայն վրացիները, այլ և մենք հայերս, մեր Վենետիկով և Վիեննայով, չունենք գիտնականորէն գրուած պատմութիւն։ Այդ պատճառով չէ կարելի չողունել Մոսկուայի Ռուսաց Կայսերական Հնագիտական Ընկերութեան Կովկասեան ճիւղի բացումը, որ անշուշտ կ'օգնի աւելի մեծ եռանդով ժողովներ, նկարագրել և պահպանել մեր երկրի հնութեան բազմազան մեայորդները, պատրաստել պատմական նիւթեր, մաքրել պատմական յիշատակարանները սխալներից։ համեմատել և ալլն։ Միայն այդ նախապատրաստական գործողութիւններից յետոյ կարելի կը լինի գիտնականորէն պարզել մեր երկրի անցեալ իրականութիւնը ամբողջապէս։ այդ է իսկապէս պատմութիւնը, իսկ նախ քան այդ նախապատրաստական գործը, առանց պատմական լուրջ քննազատութեան, վեր կենալ և բացարձակ պնդել թէ անցեալում փառաւոր էր և ընդարձակ Վրաստանը ու ոչնչութիւն՝ Հայաստանը, կամ ընդհակառակը—դա յամնայն զէպս լուրջ վրացմունք չը պէտք է համարուի... Դժբախտաբար մեր գարենոր հարեաններից մի քանիսը լոկ սեպագիր անցեալի մէջ չեն ուզում մոլորեցնել ծշմարտութիւնը,

այլ և ներկայում, մեր առօրեայ կեանքում, նոյն իսկ Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան գործերում, ուր, թւում է, անտեղի պէտք է լինէր ազգայնական ատելութիւնը ուրբանել մամուլի մէջ...

Այդ ասպարէզում գործող մշակների ճանապարհը փշոտ է: Դրանց գրութիւնը նորերս լաւ պատկերացրեց ուսու վիպասան Բօրօրը կինը, Պետքրութիւնը Տնտեսադէմների ժողովում կարդացած իր գեկուցման մէջ. «գրական պրօլետարիատի»—գրողների—անապահով վիճակի մասին էր նրա կարդացածը: Աշխատանքի և կապիտալի հարցը, ինչպէս երեսում է, մուտք է գործել և գրական գործունէութեան մէջ: Այսաեղ էլ կան գործի տէրեր կամ «գրական խօզէիններ» և վարձով աշխատաւորներ կամ «գրական բանուորներ»: Մինչդեռ գրական բանուորը իր ամբողջ մտաւորքարոյական կարողութիւնը զոհելով հասարակական գործին, մեռնելով յաճախ թողմում է ծայրագոյն չքաւորւթեան մէջ ընտանիք, որբեր. մինչդեռ նա ծերութեան ժամանակ պէտք է «բարեգործութեան» վրայ յոյս դնի—միւս կողմից, այդ նոյն գրողների ծանր աշխատանքով «գրական խօզէինները», հրատարակիչներն ու գրավաճանները, իրանց համար փառաւոր պալատներ են կանգնեցնում: Այդքան ձեռնտու է եղել ուսուաց կեանքում «գրական ճարտարուեստը» կամ ինգուստրիան: Բայց միայն նիւթական կողմից չեն գրական բանուորները կախուած իրանց «տէրերից», այլ աւելի ևս վատթար է նրանց բարոյական կախումը, որովհեան հրատարակիչների միանհեծան կամքը, քմահաճոյքը, ոչնչով չի սահմանափակուած: Այդ կողմից գուրս է գալիս, որ գրական բանուորը նոյն իսկ աւելի անապահով է քան Գիգիկական աշխատանքով ապրող հասարակ գործաւորը, որ սովորութիւն ունի իր «խօզէիննի» հետ իրան ապահովալ որոշ պայմանագիր կռել: Գրական բանուորները սովոր չեն պայմաններ կապել և յաճախ խաղալիք են իրանց գործ առողջների ձեռքում...

Ճիշտ է, Ռուսաստանում գոյութիւն ունեն զանազան բարեգործական ընկերութիւններ, որոնց նպատակն է օգնութիւն հասցնել գրական հաշմանդաներին: Այդ տիպի պէտք է լինի և Վ. Դ. Կորգանօվին նախաձեռնութեամբ «Տպագրական աշխատաւորների փոխազարձ օգնութեան ընկերութիւնը կովկասում»: Բայց Բօրօրը կինի կարծիքով, որի հետ համաձայն ենք և մենք, այդ անսակ ընկերութիւններով չէ կարելի բռնժել չարիքը: Դրանք միայն թեթեայնում են մի քանի անհատների ծանր դրութիւնը և ոչ՝ կազմակերպում հարսաահարիչների գէմ մաքառելու համար մի ամբողջ դասակարգ: Այդ է պատճառը,

որ Բօքօրըկինի առաջարկութիւնները պէտք է աւելի արմատական միջոցներ համարել: Երա կարծիքով գրական բանուարժների գրութիւնը կը բարւորուի, եթէ կազմուի գրողների գաշնակցութիւն կամ սինդիկատ, հիմնուի գրական գործ տուողների և աշխատաւորների ներկայացուցչական բիւրո, կազմուի գրողների համար էմիրիտուրային գանձարան, ամսէ ամիս տուրք հաւաքուի և կազմուի գրամագլուխ՝ գործնականապէս մրցելու համար հրատարակիչների և գրավաճանների դէմ: Գուցէ աւելորդ ըս լինի այսուեղ մեր ընթերցողին լիցեցնել, որ ուուս հրատարակիչներն ու գրավաճանները արգէն մտածում են առանձին սինդիկատ կազմել, որ անշուշտ աւելի կը վատթարացնի գրողների գրութիւնը: Հետևաբար շատ խելացի է Բօքօրըկինի առաջարկը գրողների սինդիկատի մասին: դա կը լինի հակակչու, մի կօնտր-սինդիկատ գրական խօզեինների հիմնածի դէմ:

Ճիշտ է, ուուսաց կեանքում ընթերցանութիւնը արգէն այնպիսի մեծ պահանջ է դասուել, որ գրական մեծ տաղանդները կերպող են բարորովին անտես առնել հրատարակիչներին էլ, գրավաճաններին էլ, մի Տօլմոյ կամ Գօրկիյ այնքան եկամուտ կը ստանան իրանց ստեղծագործութիւնների համար, որ շատ կապիտալիստներ և կալուածառէրեր կը նախանձեն: Բայց գրական սաղանի ռենտան, մշտական եկամուտը, միայն բացառիկ գրողների սեփականութիւն է, մինչդեռ գրականութիւնը, մասմուլը, պահանջում են գրական բանուորների մի ահազին լեզուն: Ահա այդ համեստ, բայց միննոյն ժամանակ կեանքի մէջ անհրաժեշտ աշխատաւորների գրութեան մասին պէտք է մտածել:

Այդ է ահա «գրական պրօլետարիատի» հարցը ուուսաց կեանքում<sup>\*)</sup>: Էլ ի՞նչ ասենք հայերիս գրական աշխատաւորների մասին, երբ մեր մէջ այնքան քիչ է պահանջւում գիրք, լրագիր, ամսագիր, որ ոչ մի կապիտալիստ՝ միայն նիւթական շահ ստանալու դիտաւորութեամբ, կոպէկ անգամ չի մտցնիլ հրատարակչականի նման անձեռնատու մի գործի մէջ: Մեզանում հրատարակիչը պէտք է միայն գեֆիցիտ ի նկատի ունենայ, եթէ, ի հարկէ, չուզի հարստանարել գրողներին:

Թէ ինչ գրութեան մէջ էր հրատարակչական գործը մեզանից մի 40 տարի առաջ, այդ մասամբ յայտնի պէտք է լիւ-

<sup>\*)</sup> Գժբախտարար մենք ձեռքի տակ չունեինք Բօքօրըկինի զեկուցումը ամբողջապէս և ձանօթացել ենք նրա հետ լուսագրական ոչ լիտակատար տեղեկութիւններից:

նի և ներկայից, բայց աւելի պարզ այդ հարցը վճռում են Ս. Նազարենանի նամակներից մի քանիսը, որնք տպուած են վեցամյից» վերջին գրքում՝ նա ստիպուած էր 1863 թուականին դադարեցնել «Հիւսիսափայլի» հրատարակութիւնը բաժանորդների պակասութեան պատճառով: «Ես ամենից առաւել քեռնաւորուած եմ, զորդ եմ կատարում տասն մարդու փոխանակ, այլ միւս ինչ առնեմ, մի կտոր հացը, որ ունեմ ձեռքում ոչ Հայոց տուածով, այլ իմ վարժապետութեամբ, կարող չեմ զաւակիս ձեռքից առնուլ և տալ Հայոց հարուստներին». այս ընդդեմ է մարդկացին և աստուածալին օրէնքին, — ասում է դառնայած Ս. Նազարեանը: Իսկ թէ ինչ էր ստիպուած գրել Մ. Նալբանդեանը: այդ մենք տեսանք «Մուրճի» № 10-ում (երես 184):

Վերջին 40 տարիների ընթացքում առհասարակ չատ քիչ բան է փոխուել այդ կողմից հայոց մամուլի մէջ, աշխատողների մեծագոյն մասը կողմնակի գործերով է պարապում, որովհետեւ անկարող է ապրել միայն զրական աշխատանքի չնչին վարձատրութեամբ: հայ հրատարակիչները կամ պէտք է հաշտուեն գեղիցիատի հետ կամ գործը տանեն կիսատպուատ, ձրի աշխատողների վրայ յոյսեր զնելով կը ինչ ասենք զրական «առազանդի րենտայի» մասին քանի որ հայոց ամենաժողովրդական գրողներ՝ Մաֆիին և Գամառ-Քաթիպան չքաւոր ապրեցին և չքաւորութեան մէջ թողին իրանց ընտանիքը, որբերը: Հայը հասկանում է թէ ինչ է կապիտալի, կալուածքի րենտա, իսկ զրական տաղանդի րենտան մի անըմբոնելի գաղափար է նրա համար: Եթէ ուզում ենք, որ գրականութիւնը և մամուլը մեզանում լուրջ գործօնների գեր կատարեն, պէտք է փոխենք մեր անտարբեր վերաբերմունքը և մտածենք նրա բարերելու հիմնաւոր միջոցների մասին: Քառասուն տարին քիչ ժամանակ չըր ալդ միջոցում աշխարհն հիմնովին կերպարանափոխուեց, իսկ մենք մնացինք անշարժ, այսօր կը ինչպէս 40 տարի առաջ աւելի կրօնական խնդիրներով ենք զրադուած քան հասարակական, տնտեսական, զրական, գիտական և այլն:

Յանցանք է մեր մտածողութեան մեծազոյն մասը նուիրել եկեղեցական չնչին հարցերին և ոչինչ չանել ժողովրդի մտաւոր-բարոյականը կուլտուրական ազգերի հասած աստիճաններին հասցնել յանցանք է չը բանալ նրա մաքի առաջ պատուհաններ, որոնց միջով երեսում են աւելի լայն, աւելի հեռաւոր հորիզոններ: Այդպիսի պատուհաններ են մեզ հարկաւոր և ոչ անվերջ, ձանձրալի վէճեր աէրտէրների, երէցփոխանների, վարդապետների և հոգեհանգիստների մասին: Եթէ ժո-

զովուրդը զարգանայ նա այնպէս անտարբեր չի գտնուիլ դէպի կղերական ոտնձութիւնները ինչպէս այժմ, երբ նրան հեշտութեամբ կարողանում են մոլորեցնել զանազան բախտախլնդիրներ: Երբ ժողովրդի մտաւորաբարոյականը բարձրանայ, նա կարուած չի լինի մեր գրականութիւնից, չի ապրիլ իր առանձին, կզզիացած կեանքով և, աւելի մեծ մասնակցութիւն ցոյց տալով հասարակական հարցերում, կը ստիպի որ և մեր գրադներն աւելի ուշ դարձնեն կեանքի հիմնական հարցերի վրայ: Իսկ այժմ մեր գրականութիւնը, մամուլը մի շատ սակաւաթիւ խմբի հետաքրքրութեան առարկայ է, այդ է պատճառը, որ նա աւելի շրջանական, խմբային բնաւորութիւն է կրում քան լայն հասարակական: Ինչպէս մի անգամ առիթ ենք ունեցել յիշելու, մեր հասարակական կեանքը պտտում է եկեղեցու, Դպրոցի, թատրոնի և մամուլի շուրջը. բայց ինչպէս, ովքեր են այդ «հետաքրքրուողները», եթէ ոչ համարեա միայն հէնց այդ ասպարէզներում գործող անձինք: Դրանցից դուրս աիրում է մի լուս, անտարբեր անապատ, որի մէջ կէնտ երեսում են նոր վախճանուած Աստուածատուր Կածկածեանի նման անհատներ, որոնք իրանց ծերութեան հասակում անգամ պահպանում են ուսանողական կեանքի վեհ իդէաներ, մինչև վերջը գերագասելով հասարակական շահերը անձնական աջողութիւններից: Բայց քանի Կածկածեաններ կարող ենք ցոյց տալ գունդուդունդ կեանքի այլանող ալիքների մէջ ընկնող բարձրագոյն կրթութիւն ստացած հայերիս մէջ...

## ԼԵԽՈՆ ՍԱՐԳՍԵԱՆ

Հրատարակուած է ներքին գործերի մինիստրի հետևեալ կարգադրութիւնը. «Պետական կարգը և հասարակական հանգուստութիւնը պաշտպանելու համար եղած միջոցների կանոնադրութեան 7-րդ յօդուածի համաձայն, անհրաժեշտ համարելով յայտարարել սասակացրած պահպանութեան դրութեան մէջ՝ Իրգա, Խւրեվ, Մինսկ, Մօգիէվ, Գօմէլ, Դվինակ, Վիտեբսկ, Բէլօստօկ, Նիժնի-Նօվգորոդ, Կազան, Տօմսկ, Եարօսլավ, Սարատով, Պոլտավա, Սամարա, Քիշինեվ քաղաքները և Վինօփ նահանգը, ներքին գործերի մինիստրը դրա մասին գելուցեց կառավարչական սենատին:

Հրատարակուած է ժողովրդական լուսաւորութեան մինիստրի հետևեալ հրամանը. «Խարկօվի ուսումնարանական շրջեկաներ, 1901.

ջանի իշխանութիւնից վերջին ժամանակ ստացուած զեկուցումներից երեսում է, որ Խարկօվի Կայսերական համալսարանում այս տարուայ հէնց սկզբից բժշկական ֆակուլտէտի 5-րորդ կուրսի ուսանողների մեծամասնութիւնը, որին գնկավարում էին 1899 թուին տեղի ունեցած անկարգութիւնների պատճառվ հեռացրած եւ ապա նորից ուսանող ընդունուած անձնք, սիստեմատիկական հալածանք յարուցեց իրանց այն ընկերների գէմ, որոնք հաւատարիմ մնալով իրանց պարտականութեան, չը մասնակցեցին ուսանողական շարժմանը և 1899 թուին քննութիւն բռնեցին ժամանակին: Այդ հալածանքը բացարուում է նրանով, որ 5-րորդ կուրսի ուսանողների մեծամասնութիւնը, զիսաւորապէս անկարգութիւններին մասնակցողները, որոնք ժամանակաւորապէս հեռացրած լինելով համալսարանից, կորցրին մի տարի, նախանձով էին վերաբերուում իրանց այն ընկերներին, որոնք խաղաղութեամբ շարունակեցին ուսումնական պարապմունքները, մի տարով առաջ անցան և մասամբ այժմ արդէն աւարտեցին ուսման դասընթացքը: 5-րորդ կուրսի 124 ուսանողներից անկարգութիւնների այս կուսակցութեանը միացել են 95 հոգի, որոնց մէջ առանձին գեր է խաղում հրէաների իրար հետ սերտ կապուած մի խումբ, որ բաղկացած է 50 հոգուց: Այս կուսակցութեանը յարել են և բժշկական ֆակուլտէտի 4-րորդ կուրսից բազմաթիւ ուսանողներ, որոնք նոյնպէս մասնակից էին 1899 թուի անկարգութիւններին: Այս հալածանքները արտայայտուեցին նրանով, որ այս տարուայ հոկտեմբերին յիշուած կուսակցութեան ուսանողները սկսեցին պահանջել պրօֆէսօրներից, որ դասախոսութիւններին և զբաղմունքներին օժանդակ-ուսուունական հաստատութիւնների մէջ թոյլ տրուի ներկայ լինել միայն այն ուսանողներին և դասընթացքն աւարտած բժիշկներին, որոնց անունները նշանակուած են այդ կուսակցութեան կազմած առանձին յուցակում, որի մէջ չէին մտած 1899-ին քննութիւն բռնող բոլոր ուսանողների անունները: Բացի սրանից այս կուսակցութիւնը պահանջում էր, որ նրա յուցակում չը նշանակուած անձանց չը տրուին օրդինատօրի, ասիստէնտի և այլ պաշտօններ: Պրօֆէսօրների մեծամասնութիւնը կարական կերպով մերժեց կատարել այդ պահանջները, բայց մի քանիսը, երկիր կրելով անկարգութիւններից, զիջողութիւններ արին, որոնց հետևանքն այն եղաւ, որ հեռացրին մի քանի բըժիշկներին լաբօրատօրիաներից և հիւանդանոցներից: Ռէկաորփ ձեռք առած միջոցները՝ կարգ հաստատելու համալսարանում, աջողութիւն չունեցան: Անկախ այս բանից նոյնեմբերի 28-ին

գժգոհների կուսակցութիւնը փորձ փորձեց ժողով գումարել՝ քննելու համար Խարկօվի անասնաբուժական ինստիտուտի I կուրսից արձակուած ուսանողների հարցը, բայց համալսարանի ժողովման դահլիճում հաւաքուած 80 հոգին, առաջ քան թէ կարող էր գալ իշխանութիւնը, արագութեամբ գուրս վազեցին դահլիճից՝ ծեծելու մի քանի ծառաների։ Դուրս գալով համալսարանի շինութիւնից և անցնելով Սումսկայեա փողոցով, ուսանողների այս փոքրաթիւ խումբը, որին միացան և մի քանի ուսանողներ ուրիշ բարձրագոյն զպրոցներից, ցոյցեր արաւ և երկու պատուհան ջարդեց «Խօհեան Կրայ» լրագրի խմբագրատանը, սակայն սստիկանութիւնը անկարգութիւնների առաջն առաւ, ձերբակալելով մօտ 70 հոգու, որոնք կարծ հարցուփորձի ենթարկուելուց յետոյ արձակուեցին։ Ապա հետեւեալ օրը, նոյեմբերի 29-ին, համալսարանում տեղի ունեցաւ նոր ժողով 200 անձների. մասնակցութեամբ, որ քննում էր անասնաբուժական ինստիտուտի I կուրսից արձակուած ուսանողներին համալրութիւն յայտնելու հարցը և որ ձայների չնշին մեծամասնութեամբ վճռեց դիմել «գործնական գործադուլիք» նոյեմբերի 30-ին, որպէս գործադրութիւն ժողովի այս որոշման, մի խումբ ուսանողներ, բաղկացած մօտ 300 հոգուց, ժողովուելով Մաքսիմենկո և Զագուրսկի պրօֆէսօրների դասախոսութիւններին, չլոցով, աղաղակներով և բռնութիւն գործ գնելու սպասնալիքներով խանգարում էին զասախօսութիւնները։ Ուսանողները իրանց հետ բերել էին լսարան և մի քանի սրուակ ծծմբածխածին գաղ, որի պատճառով, ինչպէս նաև հոգեկան յուզմունքի չնորհիւ, պրօֆէսօր Զագուրսկի և դասախոսութիւնները լսող ուսանողներից մի քանիսը խոր ուշաթափութեան մէջ ընկան։ Նոյն օրը, ժամի 3-ին կէսօրից յետոյ, քաղաքային թատրոնի մօտ հաւաքուած ուսանողների խումբը, թուով մօտ 300 հոգի, սկսեց երգել տպուած երգեր, բայց ցրուեց սստիկանութեան միջսցով։ Դեկտեմբերի 1-ին անկարգութիւնները համալսարանում շարունակուած էին նոյն եղանակով, ուստի և զասախօսութիւնների ընթերցանութիւնը այդ օրը, բէկաօրի կարգադրութեամբ, զադարեց։ Վարչութեան որոշմամբ, որ կայացաւ նոյեմբերի 30-ին, 52 ուսանող, անկարգութիւններին յայտնապէս մասնակցողներից, արձակուեցին համալսարանից, և տեղական ուսումնարանական իշխանութիւնը դիմեց ինձ խնդրելով թոյտութիւն տալ դադարեցնել զասախօսութիւնները մինչև դևկտեմբերի 20-ը։ Ի նկատի առնելով վերոյիշեալը, ես չեմ կարող իմ խորին վիշար չը յայտնել, որ բարձրագոյն կրթութիւնն աւարտող երիտասարդները կարող էին թոյլ տալ իրանց, և այս էլ

ուսումնարանի պատերի մէջ, անքաղաքավար, խռովայոյդ և  
անձունի վարմունքներ, որոնք այնքան քիչ վայել են կրթուած  
մարդկանց, և համել մինչ այն տեղը, որ բանութիւն գործ դնեն  
պրօֆէսօրների և ոչ մի յանցանք չունեցող ընկերների վերա-  
բերմամբ, որոնք ցանկանում են շարունակել իրանց պարապ-  
մունքները: Անհրաժեշտ համարելով անյապալ միջոցներ ձեռք  
առնել՝ վերացնելու այդ ցաւալի երեսոյթը և վերականգնելու ու-  
սուցման գործի կանոնաւոր ընթացքը, ուշադրութեան առնելով  
նոյնպէս, որ անկարգութիւններին մասնակցում է միայն չնչին  
փոքրամասնութիւն, որ չէ կամենում պարապել, և այս պատ-  
ճառով գասախօսութիւնների գաղաքեցումը կը վեսաէր ուսա-  
նողների ահազին մեծամասնութեան շահերին, որոնք (ուսա-  
նողների ընդհանուր թիւը 1,800 է) չեն մասնակցում անկար-  
գութիւններին, ես առաջարկում եմ Խարկօվի ուսումնարանա-  
կան շրջան կառավարչին—1) գասախօսութիւնները, ինչպէս  
նաև պարապմունքները լարօրատօրիաներում, կարինէտներում  
և հիւանդանոցներում չը գաղաքեցնել՝ պարապելու լիուլի հնա-  
րաւորութիւն տալով այն ուսանողներին, որոնք կամենում են  
պարապել. 2) պարտաւորեցնել համասարանական վարչութեանը  
անյապալ ձեռնամուխ լինել պարզելու այն ուսանողների յան-  
ցանքը, որոնք մասնակցել են նոյեմբերի 30-ի և դեկտեմբերի  
1-ի անկարգութիւններին, և ենթարկել նրանց, իրանց յան-  
ցանքի չափով, արժանի պատժի, սկսած յանդիմանութիւնից  
մինչև արձակումը համալսարանից որոշ ժամանակամիջոցներով.  
3) խնդրել պարոններ պրօֆէսօրներին ամեն միջոցներով աջակ-  
ցութիւն ցոյց տալ անկարգութիւններին չը մասնակցող ուսա-  
նողներին, նոյնպէս և ընթացաւարաններին, որոնք այժմ աշխա-  
տում են լարօրատօրիաներում, կարինէտներում և հիւանդա-  
նոցներում, յիշելով, որ ծառայողական պարտքը և երդումը մեզ  
բոլորին վրայ սրբազն պարտաւորութիւն են դնում կատա-  
րեալ աջակցութիւն ցոյց տալու բէկտօրին՝ ոչ միայն անկար-  
գութիւնները գաղաքեցնելու, այլ և նախօրօք նրանց առաջն  
առնելու գործում, և 4) յայտել գասընթացքն աւարտող ուսա-  
նողներին՝ թէ այն անձանց, որոնք արգելք կը հանդիսանան ուս-  
ման գործի կանոնաւոր ընթացքին, թոյլ չի արուի 1902 թուա-  
կանին պետական քննութիւն բռնել»: